ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» Հոկտեմբերի 2020թ. N ՄՊ/427-2020

ք. Արմավիր

«ԱՊԱԳԱՅԻ ՀՈՎՍԵՓ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԽԻԹԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԻՍԿՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Մխիթար Մխիթարյանինի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի գրությունը՝ կամավորական հիմունքներով Արցախի Հանրապետություն՝ մարտական գործողություններին մասնակցելու նպատակով.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մխիթար Մխիթարյանին ժամանակավորապես ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը):
2. «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես վերապահել «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Իսկուհի Հակոբյանին՝ մինչև հիմքի վերացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 26.10.2020 17:57:06 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230